

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB SM 72-03-01	Էջ 1/7
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ՎԱՐԿԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 2	
		Ուժի մեջ է՝ 15.12.2014	

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ՎԱՐԿԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

**Տվյալ տեղեկատվական ամփոփագրին կից ներկայացվում են նաև ֆիզիկական անձանց համար վարկատեսակների պայմանները, որտեղ կարող էր գտնել ամբողջական տեղեկատվությունը: Նշված տեղեկություններին կարող էր ծանոթանալ նաև Ամերիաբանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am):**

Ամերիաբանկը ֆիզիկական անձանց առաջարկում է հետևյալ վարկատեսակները.

- Բնակելի նշանակության անշարժ գույքի ձեռքբերման/ վերանորոգման կառուցապատման վարկ
- Առևտրային նշանակության անշարժ գույքի ձեռքբերման/ վերանորոգման/կառուցապատման վարկ
- Ներդրումային վարկ
- Առաջնային և երկրորդային շուկաներից տրանսպորտային միջոցի ձեռքբերման վարկ
- Սպառողական վարկ ապահովությամբ և առանց ապահովության
- Վարկային գիծ կրեդիտային քարտերով
- Օվերդրաֆտ դեբետային քարտերով

Վարկի ձևակերպումը կատարվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում:

Վարկի գումարը տրամադրվում է անկանխիկ:

Հաճախորդի ցանկությամբ օվերդրաֆտը կարող է տրամադրվել ցանկացած ողջամիտ նվազագույն ժամկետով: Վարկային գիծը տրամադրվում է հաճախորդի ցանկությամբ ցանկացած ողջամիտ նվազագույն ժամկետով և գործում է մինչև Բանկի կողմից հետ կանչումը:

Սպառողական վարկի, տրանսպորտային միջոցի ձեռքբերման վարկի, վարկային գծի և օվերդրաֆտի դեպքում հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

### **Վարկերի տոկոսադրույքների հաշվարկման կարգը**

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ վարկի նվազող մնացորդի նկատմամբ: Որպես բաժանարար հիմք է ընդունվում տարին 365 օր: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է այն որոշող պայմանների հիմքով, կրում է կողմնորոշող բնույթ և կարող է Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կախված Վարկառուի կողմից Վարկը Պայմանագրով սահմանված ժամկետներից շուտ մարելուց, ինչպես նաև դրա հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝



A՝ կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/  
 n՝ կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը  
 N՝ կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը  
 Kn՝ կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը  
 Dn՝ կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով  
 i՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

**Տարեկան փաստացի տոկոսադրույքների հաշվարկման օրինակ**

**1. Տրանսպորտային միջոցի ձեռքբերման վարկ՝**

1. Տրամադրվող գումար՝ 5,000,000 ՀՀ դրամ
2. Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 16%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
3. Մարման ժամկետ՝ 5 տարի (1825 օր)
4. Մարումներ՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին)
5. Սպառողի կողմից կատարվող այլ վճարումներ՝

Ավտոմեքենայի գնահատման միանվագ վճար՝ 10,000 դրամ

Գրավի նոտարական միանվագ վճար՝ 16,000 դրամ

Ոստիկանության միանվագ վճար՝ 5,000 դրամ

Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին /վարկի գումարի մեկ տոկոս/  
 50,000 դրամ

Ապահովագրական տարեկան վճար՝ վարկի մնացորդի 2.5%-ի չափով, որից առաջին վճարը (5,000,000 \* 2.5%=125,000 դրամ) կատարվում է նախքան վարկի տրամադրումը, 2-րդ տարվանը կազմում է 107,260 դրամ, 3-րդ տարվանը՝ 86,460 դրամ, 4-րդ տարվանը՝ 62,080 դրամ, 5-րդ տարվանը՝ 33,500 դրամ:

2. Պայմաններից ստացվում է, որ N=65, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է, 4-րդ հերթական տարիների ապահովագրական վճարները, իսկ մնացած 60-ը՝ մայր գումարի, տոկոսների վճարումներն են:

3. Ելնելով 1 կետում նշված պայմաններից՝ կատանանք վարկի մարումների հետևյալ գրաֆիկը.

Մարումների հերթականությունը՝ n	Ստացումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագումարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	206,000.00			206,000.00
2	30		66,666.67	54,923.62	121,590.29
3	61		65,934.35	55,655.93	121,590.29
4	92		65,192.27	56,398.01	121,590.29
5	120		64,440.30	57,149.99	121,590.29
6	151		63,678.30	57,911.99	121,590.29
7	181		62,906.14	58,684.15	121,590.29
8	212		62,123.68	59,466.60	121,590.29
9	242		61,330.80	60,259.49	121,590.29
10	273		60,527.34	61,062.95	121,590.29
11	304		59,713.16	61,877.12	121,590.29
12	334		58,888.14	62,702.15	121,590.29
13	365		58,052.11	63,538.18	121,590.29



14	366	107,260.00			107,260.00
15	395		57,204.93	64385.35	121,590.29
16	426		56,346.46	65243.83	121,590.29
17	457		55,476.54	66113.74	121,590.29
18	485		54,595.03	66995.26	121,590.29
19	516		53,701.76	67888.53	121,590.29
20	546		52,796.57	68793.71	121,590.29
21	577		51,879.33	69710.96	121,590.29
22	607		50,949.85	70640.44	121,590.29
23	638		50,007.97	71582.31	121,590.29
24	669		49,053.54	72536.74	121,590.29
25	699		48,086.39	73503.90	121,590.29
26	730		47,106.33	74483.95	121,590.29
27	731	86,460.00			86,460.00
28	760		46,113.21	75477.07	121,590.29
29	791		45,106.85	76483.43	121,590.29
30	822		44,087.07	77503.21	121,590.29
31	850		43,053.70	78536.59	121,590.29
32	881		42,006.54	79583.74	121,590.29
33	911		40,945.43	80644.86	121,590.29
34	942		39,870.16	81720.12	121,590.29
35	972		38,780.56	82809.72	121,590.29
36	1003		37,676.43	83913.85	121,590.29
37	1034		36,557.58	85032.71	121,590.29
38	1064		35,423.81	86166.48	121,590.29
39	1095		34,274.92	87315.36	121,590.29
40	1096	62,080.00			62,080.00
41	1125		33,110.72	88479.57	121,590.29
42	1156		31,930.99	89659.29	121,590.29
43	1187		30,735.53	90854.75	121,590.29
44	1215		29,524.14	92066.15	121,590.29
45	1246		28,296.59	93293.70	121,590.29
46	1276		27,052.67	94537.61	121,590.29
47	1307		25,792.17	95798.11	121,590.29
48	1337		24,514.86	97075.42	121,590.29
49	1368		23,220.52	98369.76	121,590.29
50	1399		21,908.93	99681.36	121,590.29
51	1429		20,579.84	101010.44	121,590.29
52	1460		19,233.04	102357.25	121,590.29
53	1461	33,500.00			33,500.00
54	1490		17,868.27	103722.01	121,590.29
55	1521		16,485.31	105104.97	121,590.29
56	1552		15,083.91	106506.37	121,590.29
57	1580		13,663.83	107926.46	121,590.29
58	1611		12,224.81	109365.48	121,590.29
59	1641		10,766.60	110823.68	121,590.29
60	1672		9,288.95	112301.33	121,590.29
61	1702		7,791.60	113798.68	121,590.29



62	1733		6,274.29	115316.00	121,590.29
63	1764		4,736.74	116853.54	121,590.29
64	1794		3,178.69	118411.59	121,590.29
65	1825		1,599.87	119990.41	121,590.29

4. Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) կազմում են՝

$$K1=10,000+16,000+5,000+50,000+125,000=206,000$$

5. Ունենալով բոլոր անհրաժեշտ մեծությունները և օգտվելով Օրենքի բանաձևից՝ հնարավոր է ստանալ տարեկան փաստացի տոկոսադրույքը՝

$$5,000,000 = \frac{206,000}{(1+i)^0} + \frac{121,590.29}{(1+i)^{30}} + \frac{121,590.29}{(1+i)^{61}} + \frac{121,590.29}{(1+i)^{92}} + \dots + \frac{121,590.29}{(1+i)^{1825}}$$

որտեղից՝

$$5,000,000 - \frac{121,590.29}{(1+i)^{30}} - \frac{121,590.29}{(1+i)^{61}} - \frac{121,590.29}{(1+i)^{92}} - \dots - \frac{121,590.29}{(1+i)^{1825}} = \frac{206,000}{(1+i)^0}$$

և

որտեղից՝

$$i=0.218499 \cdot 100=21.85\%$$

Արդյունքում փաստացի տոկոսադրույքը կկազմի 21.85 %:

**Տոկոսագումարի հաշվարկի ներկայացուցչական օրինակ**

Վարկի սկզբնական գումար՝ 7,000,000 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 20%

Վարկի ժամկետ՝ 60 ամիս

**Օրական հաշվեգրվող տոկոսագումարը կկազմի  $7,000,000 \cdot 20/100/365=3,835.60$**

Վերականգնվող վարկային գծերի չօգտագործված մասերի վրա տոկոսագումար չի հաշվարկվում:

Օվերդրաֆտի դեպքում տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ օգտագործված մասի նկատմամբ:

Վճարման արտոնյալ ժամանակահատվածով տրամադրված վարկային քարտերի վճարման արտոնյալ ժամանակահատվածը կազմում է առավելագույնը 51 օր:

Վճարման արտոնյալ ժամանակահատվածով տրամադրված վարկային գծերի մարումների կատարման եղանակը.



1. Եթե Վարկառուն մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարը ամբողջությամբ մարում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 21-ը (վճարման արտոնյալ ժամանակահատված), ապա օգտագործված գումարների վրա Տոկոս չի հաշվարկվում:
2. Եթե Վարկառուն մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները ամբողջությամբ չի մարում մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 21-ը, ապա այս դեպքում Վարկառուն պարտավոր է մարել օգտագործված գումարների առնվազն 10 տոկոսը, բայց ոչ պակաս, քան Բանկի սակագներով սահմանված նվազագույն մարման չափը:
3. 2-րդ կետով նկարագրված դեպքում Օգտագործված գումարների վրա օգտագործման առաջին իսկ օրվանից հաշվարկվում է տոկոս, որը հաշվարկվում է նաև հետագայում օգտագործվող/ված գումարների նկատմամբ:
4. 2-րդ կետով սահմանված նվազագույն մարման գումարը չմարելու դեպքում հաճախորդից գանձվում է տույժ՝ Բանկի սակագներով սահմանված չափով:
5. Տոկոսները ենթակա են մարման առնվազն ամիսը մեկ անգամ:

**Անվանական տոկոսադրույքի փոփոխության կարգը և պայմանները**

**Բանկն իրավունք ունի պայմանագրի գործողության ընթացքում միակողմանի փոփոխել անվանական տոկոսադրույքի չափը՝ կախված ֆինանսական շուկայից բանկի ներգրավված, ինչպես նաև ֆինանսական շուկայում տեղաբաշխված տոկոսադրույքների տատանումներից, կամ եթե ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել վարկի տարեկան տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները՝ հետևյալ դեպքերում՝**

- Եթե պարզվի, որ Վարկառուի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են
- Եթե պարզվի, որ Վարկառուն ունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ /այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ/
- Վարկառուն չի կատարում Պայմանագրով նախատեսված հետևյալ պարտավորությունները.
  - Գույքի գրավադրմամբ ապահովման միջոցի առկայության դեպքում Գրավի առարկայի վերագնահատում Բանկի պահանջով, որը կատարվում է Վարկառուի հաշվին
  - Գույքի գրավադրմամբ ապահովման միջոցի առկայության դեպքում Գրավի առարկայի վերագնահատման արդյունքում վերջինիս արժեքի նվազ լինելու պարագայում Բանկի պահանջով Գրավի առարկայի նվազած արժեքի չափով Բանկի համար ընդունելի լրացուցիչ գրավի ապահովում և/կամ այդ չափով Վարկի վաղաժամկետ մարում
- Խախտվել է Գրավի առարկայի գրավադրման պայմանագրերով նախատեսված կետերից որևէ մեկը
- Վարկառուն Վարկն օգտագործել է Պայմանագրով նախատեսված նպատակին ոչ համապատասխան
- Վարկառուն խոչընդոտել է Բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը
- Առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկը և/կամ Տոկոսները Պայմանագրով սահմանված մարման ժամկետներում չեն վերադարձվի (այդ թվում՝ սնանկության նախադրյալներ)
- Վարկառուի ակտիվների (գույքի) վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել
- Պետական իրավասու մարմինների կողմից Վարկառուի նկատմամբ հարուցվել է դատական, քրեական, վարչական կամ այլ վարույթ
- Վարկառուն չի կատարում Պայմանագրով նախատեսված պարտավորության ապահովման պարտավորությունները և/կամ թույլ է տալիս պարտավորության ապահովման կորուստ կամ դրա պայմանների վատթարացում
- Վարկառուն Պայմանագրով սահմանված մարման ժամկետներում չի վերադարձնում Վարկի գումարը և/կամ չի վճարում Տոկոսները, Մպասարկման վճարները, տուժանքը, և/կամ այդ կետանցները կրում են պարբերական բնույթ
- Վարկառուն չի ներկայացնում Պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը (փաստաթղթերը, հաշվետվությունները) կամ թույլ է տալիս դրանց ներկայացման ժամկետների խախտում
- Առկա են ՀՀ օրենսդրությամբ դրա համար նախատեսված այլ հիմքեր

Բանկը պարտավոր է անվանական տոկոսադրույքի միակողմանի փոփոխման դեպքում այդ մասին առնվազն 7 (յոթ) օր առաջ պայմանագրով սահմանված եղանակով ծանուցել վարկառուին, ինչը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված տոկոսադրույքը կիրառելու համար: Եթե վարկառուն



համաձայն չէ փոփոխված տոկոսադրույքի հետ, ապա նա իրավունք ունի վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ կատարելով լուծման օրվա դրությամբ Բանկի հանդեպ պայմանագրով ստանձնած իր պարտավորություններն ամբողջ ծավալով: Այդ պարտավորությունների վաղաժամկետ կատարման համար Բանկը վարկառուից չի կարող պահանջել լրացուցիչ տուգանքների վճարում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ Ձեր ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԲԱՆԿԸ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԻ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ, ԱՊԱ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՑՔԻ ՀԱՇՎԻՆ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՑՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՉՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

**Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:**

**Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը**

Բանկը վարկի նախնական հաստատման մասին որոշումը կայացնում է վարկի հայտը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Հաստատելու վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 8 (ութ) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում վարկը վարկառուին տրամադրվում է գրավի պայմանագրերը Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև վարկի տրամադրման այլ պայմանները վարկառուի կողմից կատարվելուց 1 (մեկ) աշխատանքային օր հետո:

**Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝**

- Բանկի և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Գործարար համբավը
- Բանկի համակարգով հաճախորդի միջոցների շրջանառության ծավալները
- Բանկային հաշվի միջին մնացորդների մեծությունը և այլն

**Վարկերի մերժման գործոնները՝**

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Վարկառուի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար:
- Վարկառուն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ (այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ):

**Գույքով ապահովված վարկի/օվերդրաֆտի/վարկային գծի դեպքում անհրաժեշտ վճարները**

Գրավադրվող անշարժ կամ շարժական գույքը պարտադիր գնահատվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից՝ հաճախորդի ընտրությամբ: Գույքի գնահատման արժեքը կազմում է 13,000 -30,000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից: Առանձին դեպքերում խոշոր գույքի գնահատման վճարը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:



Անշարժ գույքի և տրանսպորտային միջոցի գրավադրմամբ վարկավորման համար վարկառուի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը և դրանց չափը (միջակայքը).

- Նոտարական վճար՝ միանվագ 14,000-16,000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում
- Նոտարական վճար՝ 24,000-30,000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցի ձեռքբերման և գրավադրման դեպքում
- Նոտարական վճար՝ միանվագ 13,000-18,000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի գրավադրման դեպքում
- Նոտարական վճար՝ 25,000-30,000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի ձեռքբերման և գրավադրման դեպքում
- Նոտարական վճար՝ միանվագ 13,000-18,000 ՀՀ դրամ՝ հիմնական միջոցների գրավադրման դեպքում
- Միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10,000 ՀՀ դրամ
- Անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 26,000 ՀՀ դրամ
- Անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական անշարժ գույքի ձեռքբերման դեպքում՝ 71,000 ՀՀ դրամ
- ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար)՝ միանվագ 5,000 ՀՀ դրամ
- Ապահովագրությունը կատարվում է համապատասխան մասնագիտացած կազմակերպության կողմից, ընդ որում գանձվում է միջնորդավճար համաձայն տվյալ կազմակերպության կողմից սահմանված սակագների և դրույքների, որոնք կարող են փոփոխվել՝ կախված շուկայի իրավիճակից: Ապահովագրավճարները տատանվում են հետևյալ միջակայքում՝

Ապահովագրավճար	Վարկի գումարից %
Անշարժ գույք	0.15-0.25
Սարքավորումներ	0.2-0.35
Շրջանառու միջոցներ	0.3-0.5
Ավտոմեքենա	2.5

Հաճախորդի ցանկությամբ գույքի ապահովագրությունը Բանկի կողմից իրականացվելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված վերադրի չափով, ընդ որում վերադրները հետևյալն են՝ անշարժ գույք՝ 0.2%, ավտոտրանսպորտային միջոց՝ 2.5%, հիմնական միջոց՝ 0.5%:

Բանկը պահանջում է ապահովագրություն իրականացնել առնվազն վարկի մնացորդի չափով, իսկ համապատասխան գույքն ամբողջ արժեքով ապահովագրելիս ապահովագրական ընկերությունն է որոշում՝ հիմք ընդունել գույքի շուկայական, թե իրացվելի արժեքը: